Երիտասարդը ուրախ դէմքով մօտեցաւ, վեր առեց Ջալլադի զէնքերը եւ թեթեւ քայլերով դուրս գնաց՝ իր ձին պատրաստել տալու համար:

— Ո՞վ է այդ գեղեցիկ երիտասարդը, — հարցրի Ասլանից նրա բացակայութեան միջոցին:

— Յետոյ կասեմ... պատասխանեց նա: — Դա Թոխմախ-Արթինի քարաւանի հետ է եկել:

— Միթէ՞ Թոխմախ-Արթինի քարաւանը այստեղ է:

— Ոչ, մի քանի օր առաջ անցել է այստեղից: Իսկ այդ երիտասարդին թողել էր այստեղ, որ ուղեկցէ մեզ հետ մինչեւ Մուշ:

— Որքա՜ն գեղեցիկ երիտասարդ է, — կրկնեցի ես, — եւ այդ հասակում ճանապարհորդութիւններ է անում:

Ասլանը ուշադրութիւն չդարձրեց իմ ոգեւորութեան վրայ, որ պատճառեց իմ մէջ քնքուշ երիտասարդը, որի ամբողջ կազմուածքը, կարծես, սպիտակ մոմից շինուած լինէր: Նա խնդրեց, որ կանչեմ պանդոկի սպասաւորներից մէկին, հաշիւը ստանան:

Սպասաւորի փոխարէն յայտնուեց ինքը հաջի-իսաղը: Նա, երեւի, քնած էր. այնքան շտապեց, որ մոռացաւ իր հագուստը հագնել, եւ այնպէս շապիկով ու տակի ոտաշորով վազեց մեզ մօտ: Տեսնելով նրան, Ասլանը պատուիրեց ինձ, որ, որքան եւ պահանջելու լինի, վճարեմ եւ ձայնը կտրեմ, իսկ ինքը դուրս եկաւ սենեակից: Նա չկամեցաւ նայել այդ գարշելի մարդու վրայ, որի մէջ՝ բարքի մաքրութեան հետ՝ պակասում էր եւ ամենահասարակ քաղաքավարութիւնը:

Ես վճարեցի նրան սենեակի վարձը, ձիաների կացարանի վարձը, մի խօսքով, ինչ որ սկզբից խոստացել էինք նրան եւ յետոյ հարցրի.

— Էլ ուրիշ ոչինչ չկա՞յ:

— Ինչպէս չկայ, պատուելի պարոն, — պատասխանեց նա ժպտալով, եւ այդ միջոցին նրա ահագին քթի ծակերը աւելի լայնացաւ: — Ինչպէս չկայ, — կրկնեց նա եւ տուեց ինձ մի պատառ կեղտոտ թղթի կտոր, աւելացնելով, թէ բոլորը մի ըստ միոջէ գրել է տուել այդ թղթի վրայ:

Ես այժմ նրա համար «պատուելի պարոն» էի դարձել: Նա մի ամբողջ հաշիւ էր շինել, որի ճշտութիւնը եւ անճշտութիւնը քննելու համար ոչ ժամանակ կար եւ ոչ հաճութիւն: Բայց ինձ բարկացրեց մի բան:

— Այդ ջրի ամանը ինչո՞ւ էք գրել այստեղ, — հարցրի նրանից: